ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

28.08.2023
351-63

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Ռուստամ Բաղասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բաղասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2022 և 2023 թվականների ընթացքում քանի՞ հատ լվացքի մեքենա է ներմուծվել Հայաստան՝ ըստ ամիսների:
2. Որքա՞ն է կազմել այդ ներմուծված լվացքի մեքենաների ընդհանուր արժեքը նույն ժամանակահատվածում՝ ըստ ամիսների:
3. Նույն ժամանակահատվածում քանի՞ հատ լվացքի մեքենա է Հայաստանից արտահանվել Ռուսաստան և Բելառուս՝ ըստ ամիսների:
4. Որքա՞ն է կազմել այդ արտահանված լվացքի մեքենաների ընդհանուր արժեքը՝ ըստ ամիսների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան